

գործը ցոյց է ապիս ձե՛ծ կատուութիւն՝ զձերի նրբութեան եւ կանոնաւորութեան մէջ :

ԱՇուշեցու տիպըն մանաւանդ շատ պատուաբեր է պ . Միքայելեանի համար : Զեր աչքի առջ կանգնած է մի սակոյնի փոքրադիր թարմանը . Սաքօն հագի է իր գաւառին յատուկ տարազը—արխալուխ վրայից չուխայ , իսկ գլխին գրել է գտակը : Սաքոյի զէմքին վրայ ծածանող նուրբ ժպիտից զուգ հետեցնում էք սր կամ անպատճառ մի քիչ կոնծել է , եւ կամ վի տեղից , ո՛վ գիտէ , զուցէ մի յուզարկաւորութիւնից յետոյ , նրա գատարկ գրգռանի մէջ է ընկել մի քանի արատի : Բայց այդ գունուանկ զիմագծութիւնը ձեզ պիտարտւի , զուգ նրա տակ պահուած էք գոնուած մի մտայ , ողբերգական բան : Երա գլխիկոր , ընկհուած գիրքը , նրա կծկուած , դարսուած , անհամարձակ կերպարանքը ձեզ առում է , որ այդ մարդը արեւելցի է , այսինքն դարաւոր տղիտութեան ու անողոք զգրակատութեան հողի ծնունդ . . .

Պ . Միքայելեան տակաւին շատ երիտասարդ է : Եթէ զեպերի բերմունքով՝ քիզարուեստի վրայ շտօպուի նայել , ինչպէս ծախու հանուե լիք ապրանքի վրայ , պէտէ է դրանից սպասել զեղեցիկ սակզատործութիւններ :

ԹԻՖԼԻՍ ՏԻԳՐԱՆ ԶԱՒԷՆ



ԱՍՏՂԻԿԻ ՀՍՈՒՈՒՄԸ(1)

Միքեցէ վաղը , զուգ որ սիրած չէք զուգ որ սիրած էք : նորէն սիրեցէք : Գարունը եկած է , երաժշտութեան ազբուր : Գարունն Աշխարհը վերստին ծնած է : Գարունն եւ սիրողները վերստին միացած են : Գարունն Թուրքները վարուժան կ'ընտրեն , եւ անտառը իր հիւսքը կը քակէ արգասաբեր տեղատարափներուն միջոցով : Առաւօտուն քաղցր ըղձանքի ,

(1) Pervigilium Veneris , լատիներէն քերթուած մը : Գրորոք կամ չբորոք դարէն (Յ . Տ .) , դարնան չկատմամբ գրուած ամենէն գեղեցիկ բանաստեղծութիւններէն մին զոր աշխարհի գրակատութիւնը կը պարունակէ :

Թեւատարած ծառերուն տակ , մրտենիներու ճապուկ թեւերով , խոնարի կանանչազեղ ծածք մը կը հիւսէ : Առաւօտուն աստղիկը կ'իշխէ , բարձր գահին վրայ նստած :

Միքեցէ վաղը , զուգ որ երբեք չսիրեցէք . զուգ որ սիրած էք , դարձեալ սիրեցէք :

* *

Անիկա երկնքի արեւնէն ստեղծեց Աստղիկը , ովկիանտոսի փրփուրներու ծիւրերէն : Պարիզոնի երամակներուն մեջ , անոր քարձրացող երկվարներուն մէջ , Աստղիկան շնորհալի իրանը ծովի շուրերէն հրաշակեցրեց :

Միքեցէ վաղը , զուգ որ սիրած չէք . զուգ որ սիրած էք , դարձեալ սիրեցէք :

Աստղիկը , ինք , ծաղիկներու գունաբներով՝ շատագունող տարին կը զարդագեղ նորէն , ինք անձամբ արեւմուտքի հովին մեզը շունչով բուռեցող կողովները կը փթթեցնէ : Ինքն արդէն լուսաշող ցօղ , գիշերուան շունչը ծաղիկներու վրայ , զովացնող կաթիլներ կը ցանցնէ ամէն կողմ : Արցունքներու հանգոյն կը շողան , կը ցօղլաւ անոնք , սարսաղով իրենց հաւաքուած ծանրութիւնովը , գահավիժող կաթիլներ որոնց զերբարեկ կորութիւնը ինքզինք անոնց անկուծին զէմ կը պաշտպանէ :

Հիւս շողողուն ծիրանագեղ ծաղիկները իրենց ոսկի որտերք բացեր են , եւ խաղաղ աստղայեւ երկնքէն ցօղի պէս վար թագիող խնամութիւնը , վարդին կոյս կուրծքէն անոր քրտալատող վերարկուն կը քակէ առտուն կաւնուխ , որովհետեւ աստուածուէին հրամայած է որ վարդերը կարգուն արշալույսին :

Աստղիկան արիւնէն ստեղծուած է վարդը , քաղցր սիրոյ համոյցներէն , փթթուներէ , զգփիւաներէ եւ պրեւտ լուսայոգ ճառագայթներէ : Վաղը դարձեալ խոնաւ վերարկուին տակ ծածկուած անուշ ամկոտութիւնը , ամուռնուցած թէն . իչ բնտրեալ սիրականին նեա և կուտական : շիկնումը պիտր ցուցադրէ :

Միքեցէ վաղը զուգ որ սիրած չէք . զուգ որ սիրած էք , նորէն սիրեցէք :

Ինք անտուածուէին կը հլրամայէ որ կոյսերը ծրտենիներու անտառակը երթան : Գատանին ալ կ'երթան , կոյսերուն ընկերը , եւ ասակայն ոչ ոք չի հաւատար թէ Սկր-աստուածը ան :

գործ պիտի մնայ եթէ նետերը զովս ունենայ : Գտնէ՞ք զուգ. Յաւերթանարան՝ ք, անկեալ իր զբանը ձգեր է : Աէրը արձակուող ըրած է : Աստուածունէն հրամայեի է իրեն որ անղէն պարտի, մօրմերկ երթայ : Ոչ իր արեղովը, ոչ իր նետովը եւ ոչ ալ իր բոցովը ձեզ պիտի չլինան, բայց, զուգ. Յաւերթանարան : աշաւուրը կեցէք, որովհետեւ սիրոյ աստուածը զեղեցիկ է եւ ամենէն վասնզուար կերպով զինուած՝ հրը իր սիրուն անդամները մերկ են :

Միեկեք վաղը, զուգ. որ երբեք չսիրեցիք. զուգ. որ սիրեցիք. զարձեալ սիրեցէք :

Աստիկը, Դելիայի շափ ամբէն, իր նաժընտները կը զրկէ աղիւսէն : Վրան մը միայն կը խնդրենք քեզմէ (Կո՛յս որսորդուի : լսէ՛ մեր պաղատանքը) որ անասուակը արեւնթաթախ չըլլայ հոն մեանող վայրի արբանձնորով : Ինք պիտի փափաքէր որ քեզ հրաւիրէինք, եթէ ուզէր պարկեղտութիւնը փորձել. ինք անձամբ քեզ պիտի ողջագուրէր, եթէ կոյսի մը վայել ըլլար : Հոն զուս պարողները պիտի տեսնէիր. երեք ուրախարար գիշերներու մէջ, իրենց ընկերներուն խմբակներովը նուիրական անասակներու մէջ թափակուող, ծաղկազեզ դրասանդներու մէջ աղիւսէն եւ մրտենիներու ստուերներու տակէն : Ոչ Դեմեարէն, ոչ Գիւնիի աստուածը, եւ ոչ երգիչներու աստուածը բացակայ չեն այդ տեղէն : Ամբողջ գիշերը խախտանալով եւ երգելով պիտի անցնենք, ամբողջ գիշերը հսկելով պիտի լուսցնենք : Աստղիկը կ'իշխէ անասորին մէջ : Դելիա, զուս պէտք է որ տեղի աստ »

Միեկեք վաղը, զուգ. որ սիրած չէք. զուգ. որ սիրած էք, նորէն սիրեցէք :

Աստուածուէիին հրամանով՝ իր գունը Հայպլայի ծաղկներուն մէջ աղի կը կանգնի. ինք, թաղուհին, Շնորհքները զովս ստան : արդարութիւն կը ըստին, Հայպլա. ըսուր փթթումները աբտաղը՝ ընդարձակ, ինչպէս Եննայի արգաւանդ դասար : Հաս կուզան գեղուկ կոյսերը, հաս կուզան աղբիւրին օրփորդները, բոյր անոնք որ անասուններուն մէջ կը բնակին, լեճներուն պուրակներուն մէջ : Թեւուար լեճներուն պուրակներուն մէջ : Բնուար կուրթանի մայրը ասոնք բոյրին ալ խնձոյճի հո հրաւիրէ, բայց կը պատուիրէ որ մերկ Սէբին չլստանին :

Միեկեք վաղը, զուգ. որ սիրած չէք. զուգ. որ սիրած էք, նորէն սիրեցէք :

Եւ շատագուտող շուքերը կ'երկարին զեղ ի նոր բացուող ծաղկներուն : Աստուս կանուկը դեռաւ իր արտասուկան մահովը կը փութայ, եւ Հայրը ստեղծէր է ամբողջ աստիկ գարնանային անհրեւնեցով : Մենդարեր անհրեւ կը հոսի զեղ ի գորովում Մօր կուրծքը, ամբողջ ստեղծագործութիւնը կը սնանի անոր չորս արտովը եւ անոր հագին կը ներթափանցէ միտքն ու մարմինը : Նիտա խորերէն, պօքաւոր Մայրը կ'իշխէ իր թաքուն գորութեամբ՝ աշխարհի, կրկիւններու եւ ստորեկրկայ ծովուն մէջէն, արգասաւորութեան ճամբուն մէջ իր անասուն ընթացքը կը շարունակէ, եւ կը հրամայէ որ ամբողջ ստեղծագործութիւնը ծնունդի ճամբաներուն հետեւի :

Միեկեք վաղը, զուգ. որ սիրած չէք. զուգ. որ սիրած էք, նորէն սիրեցէք :

Ըզանքը կը կենդանացնէ բոլոր դաշտերը, որոնք գիտեն թէ աստղիկը մօտ է : Կ'ըսեն թէ Սէբին թակ, Աստղիկան որդին, դաշտի մը մէջ ծնած է : Այսպէս մարդագեղորն, ուր Աստղիկը ծնաւ զայն, իր կանգարտ կուրծքին վրայ խնամեց Սէբը, եւ ծաղկիկները, խոնարհկողմ, քաղցրութիւն սորվեցուցին անոր համարյալ մը :

Միեկեք վաղը, զուգ. որ սիրած չէք. զուգ. որ սիրած էք, նորէն սիրեցէք :

Օրոճներու ստուերներուն տակ արջաները հանգարտ կը պառկեն, ամէն մէկը գուն արտով, մինչդեռ շուքը բառաւոր կողմերը կը խոնարհի : Տե՛ս խաղաղ, մայրը հօտերը իրենց էգերու հետ շուքերու տակ, մինչեւ լուս լեճակները կ'արձապանգին կարապին կոխնչը եւ թաղուհները կը շարունակեն իրենց ուրախ երգերը աստուածուէիին հրամանովը : Կ'երգէ նաեւ Տիբեոսի հովանուհին հրաւիրի. ստուերին տակ. այնպէս որ մարդ կը կարծէ թէ սիրոյ բուրբ ըզանքը երաժշտութեան մէջ սփոփանք կը գտնէ եւ կը մոռնայ անպտթ անարդանքը իր քրոջ տար էրկան(1) :

Կ'երգէ ան, եւ ես լուս կը մնամ : Բայց, ո՛հ, ե՞րբ պիտի գայ իմ գարունս : Ե՞րբ ես ալ

(1) Գիւնարանական ակնարկութիւն Փիլոմէլի բանաստեղծութեան : Եւս :

ծրեհանակին պէս պիտի երգես՝ Ս'րբ այլևս լուս պիտի չմնա: Լուս կենալով Մուսսս կորննցուցի, Փերէն ա՛լ ինձի կարեւորութիւն չի տար(1): Ամիկլայի ժողովուրդն ալ այս կերպով կորսուեցաւ ստե՛նօք:

Սրբեցէք վաղը, դուք որ սիրած չեք . դուք որ սիրած էք, նորէն սիրեցէք:

Յրգ. Տ. Մ. ԱՐՇԱԿ

Նիւ ԷնվըՆ



ԳՐԲԵՐ ԵՒ ՍԱՐԴԵՐ

Հ. ԱՐՄԵՆ ՂԱԶԻԿՆԱՆԻՆՈՐ ՄԱՏՆԱԳԻՏՈՒ-
ԹԻՒՆԸ. — ԱՐԳԱՐ ԾՈՎԱԶՆՆԵՍԱՆԻ ՄԱՀԸ

Նախնի մը որ առջ քառայն անաղին պրակը ընոր Մասնեագիտութեան զր սկսած է կը-
րատարակել և Արսէն Ղազիկեան Այդ անաղին
պրակը բաւական որոշ գաղափար կուտայ
ամբողջ աշխատութեան վրայ, եւ այդ գաղա-
փարը վերջին ծայր նպատակներ է: Զ. Ղազիկե-
ան կ'ուզէ մեզի ամբողջական ցուցակը տալ
կայեղին լեզուով սպարաբուած բոլոր գրքերուն,
գրքոյններուն . պարբերականներուն՝ սպար-
աբուութեան գիւտէն մինչեւ այսօր: Ողբագեղ
Զ. Գարեգին Զարպանէլեանն է որ Հայոց մէջ
անաղին փորձն բրած է այդ ցուցակը կազմե-
լու, եւ հրատարակած է զձայնական Մասնա-
գիտութիւնն մը, որ ցարգ միակ աշխատու-
թիւնը եղած է իր տեսակին մէջ . այդ գործը
հետև էր ամբողջական ու կատարել ըլլալէ .
յարգելի Միւլիթարեանն էր ցուցակը կազմած
էր՝ մեծ մասամբ անուղղակի աղբիւրներու
գիմելով, ու սխալներ ինչպէս եւ պոկտաներ
չառ կային իր գործին մէջ: Զ. Ղազիկեան
վերահսելով իր նախորդին աշխատութիւնը,
բարեբաղդողութիւնն ունեցած է ուղղակի ճանն-
լու իր ներքը—սպառնելով գրքերու եւ պար-
բերականներու այն ճոխ հաւաքածոյն զոր
այժմ ունի Ս. Ղազարու վանքը եւ որ Հ.
Զարպանէլեանի օրով շատ պակասաւոր էր:

(1) Ամիկլայ զաղաքին ընկալիչներուն արգի-
լուած էր թշնամուոյն վրայ խօսել, այնպէս որ
կերթ թշնամին զաղաքին վրայ կը յարակէր. ոչ
ոք չէր համարձակեր իրարու լուր տալ, եւ
այսպէս ցաղաքը կը կործանէր:

Վաճաքն մէջ պակաս գրքերուն ու պարբերա-
կաններուն վրայ ալ որոշ ու եշգրիտ ծանո-
թութիւններ ունենայու. համար Հ. Ղազիկեան
կատարած է բոլոր կարի եղած գիմելները,
լուրջ ճանաչութիւնն անցուցած է իրեն զրկուած
տեղեկութիւնները, ու եւ ջանք չէ խնայած
վերջապէս՝ իր գործը գաղափարելու ու անթերի
ընելու համար, Յաջողած է բացարձակապէս,
Չեմ գիտեր . ոչ մէկ միջոց չունիմ այդ մասին
որոշ գաղափարն յայտնելու համար. եւ արդէն
այդպիսի անհնարժուարին գործի մը մէջ՝
վերջնական ու բացարձակ կատարելութիւն
անկնար է. սա միայն հաստատ է որ Հ. Ղազիկե-
ան շատ լրջօրէն ըմբռնած է իր գործը, եւ
անոր կատարելութեան համար ըրած է մարդ-
կայտերի կարիչի եղած բոլոր ջանքերը: Անի
մեծ արժանիք մըն է զոր պէտք է գնահատել .
հայ ուրիշ արժանիք մըն ալ, Դիւրին չէր .
Հ. Ղազիկեանին պէս երիտասարդ ու խնայալատ
մտքի մը համար, որ արուեստագէտի շատ սի-
րուն խառնուածք մը ի յայտ բերած է Օտտոմանի
եւ Տանթիէի գեղեցիկ թարգմանութիւններով,
չժուլի այսպիսի չոր ու ձանձրանալի գործի մը
անոր զսեղ տեսչին մաս մը իր ժամանակէն ու
իր ուժերէն . Հ. Ղազիկեան այդ գեղեցիկութեան
ըրած է իրականութիւնը իր երկայն ջանքերուն . այդ
արդիւնքը շատ գեղեցիկ է . ու բոլոր անոնք
որ մեր մէջ հայ մտքին զարգացման պատմու-
թեամբ կը զրաջին, երախտագէտ ըլլալու են
երիտասարդ ու աշխատասէր Միւլիթարեանին,
որ իրենց կ'ընծայէ ինչամտ համապատասխան մը
հայ մտաւոր գործունէութեան . ինչ որ անհու-
նապէս կը բացմապատէ այդ աշխատութեան
արժանիքը, այն է որ Հ. Ղազիկեան չէ շատացած
պարզ ցուցակ մը կազմելով, իր ձեռքով շատ
աւելի լայն է եղած. Հ. Ղազիկեանի Վասե-
նագիտութիւնը՝ թղթատող մը հոն պիտի
գտնէ իւրաքանչիւր հայ հեղինակի անունին
ըով՝ ոչ միայն անոր գրքի նեւով նրատարակու-
թիւններուն ցուցակը, անոնց անձնութիւն վե-
րաբերող բոլոր մանրամասնութիւններով, այլ
եւ այդ հեղինակին թերթերու, հանդէսներու
մէջ նրատարակած յօդու արձաններուն ինչպէս եւ
անոր տարբեր լեզուներով կատարակած աշխա-
տութիւններուն վրայ տեղեկութիւններ, անոր
գործերուն մասին թերթերու, հանդէսներու
կամ գրքերու մէջ լոյս ստեպ յօդու անոնք,
կենսագրախաններու, ճանաչատականներու